# ՀՐԱՆՏ ՄԱԹԷՈՍԵԱՆԻ «ԱՀՆԻՁՈՐ» ԱԿՆԱՐԿԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՆԹԻՄԱՍՏԸ

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Հոկտեմբերեան Յեղափոխութիւնն աննախադէպ երեւոյթ էր համաշխարհային քաղաքակրթութեան պատմութեան մէջ. այն միանգամայն ինքնատիպ ուղի էր պարտադրում Ռուսաստանի զարգացման ընթացքին։ Այդ հսկայական երկիրն իր տնտեսական յետամնացութեամբ անկարող էր մրցակցել Արեւմուտքի հետ, նրան անհրաժեշտ էր այնպիսի միջոց, որը գոնէ բարոյական առումով «կը հաւասարակշռէր» հակադիր ուժերի յարաբերակցութիւնը։ Եւ դա եղաւ սոցիալիզմը։ Այն ստեղծուեց Արեւմուտքում՝ որպէս հասարակական յարաբերութիւններում առկայ մեծագոյն վրիպումների, բարոյական կորուստների, անարդարութեան դէմ պայքարի, հաւասարութեան վերականգնման մղումի հետեւանք։ Ռուսաստանն այս անգամ էլ Պետրոս Մեծից երկու հարիւր քառասուն տարի անց գործադրեց արեւմտեան մեթոդները՝ նոյն Արեւմուտքի դէմ պայքարի ընթացքում։ Բոլշեւիկները «Ռուսական պատմութեանը տուեցին բացարձակապէս նոր ուղղութիւն, որովհետեւ Ռուսաստանն առաջին անգամ ընդունեց արեւմտեան աշխարհայեացքը»[1]։

Համաշխարհային քաղաքակրթութեան ընդհանուր երթին զուգընթաց ձեւաւորուեց հսկայական մի տէրութիւն, որտեղ ակնյայտ առաւելութիւնները զուգորդուեցին ակնյայտ թերութիւններին. ե՛ւ տնտեսութեան, ե՛ւ մշակոյթի, ե՛ւ քաղաքականութեան մէջ ամէն ինչ ենթակայ դարձաւ գաղափարախօսութեանը։ Իհարկէ սոցիալիզմը կատարեց կարեւոր եւ վճռական քայլը՝ ազատեց մարդուն բռնութիւնից, չկատարելով երկրորդ եւ ոչ-պակաս էական քայլը՝ անհատական որակների խրախուսումը։ Տնտեսութեան մէջ պետութիւնն իր ձեռքում կենտրոնացրեց ինչպէս յաւելեալ շահոյթը, այնպէս էլ անմիջական մասնակցութիւն ունեցաւ արտադրութեան բուն գործընթացին՝ դրանով իսկ բացառելով ազատ զարգացումը։ Նոյնը կատարուեց եւ մշակոյթի բնագաւառում, սոցիալիստական ռէալիզմը սահմանափակեց երեւոյթների ընկալման ոլորտը։ Ճիշտ է, այն իրականութիւնը խորքով բացայայտելու ճիգերի

արտայայտութիւն էր, բայց սոցիալիստական էր՝ գաղափարական ընդգծուած կողմնապահութեամբ։

Մ. Կրիգէրը, խօսելով արեւմտեան տեսութիւնների մասին, առանձնացրել է երկու կարեւոր մօտեցում, որոնք արտայայտւում են երեւոյթների արտացոլման համընդհանուր ոլորտում։ Առաջինը՝ «ռէալիստական» մօտեցումը, գրականութիւնն ուղղակիօրէն համադրում է մշակութային, սոցիալական իրականութեանը, երկրորդը՝ «դիդակտիկական»ը, գրականութիւնը համադրում է ինչ-որ գաղափարախօսութեան, այսինքն՝ արժէքների մշակութային «պրոեկցիային», որ պէտք է պաշտպանուի հասարակութեան, սոցիալական խմբերի, անհատների կողմից։ Ամենատարբեր ժամանակներում, ամենատարբեր ու հակադիր քաղաքական հայեացքներ ունեցող մարդիկ՝ ե՛ւ Վերածնութեան նէօպլատոնականները, ե՛ւ նէօկլասիկները, ե՛ւ վիկտորիանականները, ե՛ւ ամերիկեան նէօհումանիստները, ե՛ւ դարասկզբի մարքսիստները, գեղարուեստական ստեղծագործութեան մէջ տեսնում էին իրականութեան ակնյայտ կամ ոչ-ակնյայտ գաղափարական պատկերացումների ալեգորիան[2]։

Յեղափոխութիւնից յետոյ խորհրդային գրականութիւնը մինչեւ 1950ականները ընդգծուած գաղափարական բնոյթ ունէր։ Անհատները, ովքեր իրենց ստեղծագործութեամբ չէին տեղակայւում սխեմաների եւ պարտադրանքի տիրոյթում, իրենց կեանքով վճարեցին «վրիպումների» համար։ Դարակէսի գրականութիւնը մաթէոսեանական ընկալմամբ, բնագդով - իսկ առանձին դէպքերում՝ նաեւ գիտակցաբար - նահանջեց իր դիրքերից, քանի որ շարունակում էր հին առաքելութիւնը՝ զանգուածներին հասցնել նոր գաղափարներ գրականութեան միջոցով[3]։

Անգա՛մ մեծ կորուստների գնով, հայ գրականութիւնը դարակէսին ունեցաւ փրկուած հեղինակներ։ 1960ականների սերունդը եւ մասնաւորապէս Մաթէոսեանն իր ստեղծագործութեամբ մեծ ծառայութիւն մատուցեց իրականութեանը։ Դա գաղափարախօսութեան լուսաբանողի բաւականաչափ անյարմար դերը նորով փոխարինելն էր, փորձ էր արւում նուաճել բուն կեանքը։

1980ականներին սկսած վերակառուցումը չփրկեց ընդհանուր կացութիւնը, քանի որ «վերեւից» իջեցուած հրահանգներն իրականում հիւանդ հասարակարգը բուժելու, «ներունակ ոյժն արթնացնելու» նպատակ էին հետապնդում, ինչն իրականում գաղափարական առումով մնում էր տասնամեակներ շարունակ առաջ քաշուած հարցադրումների շրջանակներում։ Հարկ էր կատարելագործել մեթոդները՝ շուտափոյթ

քայլերով փրկելու հասարակարգը։ Տնտեսութեան բնագաւառում բեկում մտցնելը գրեթէ անհնարին կամ խիստ դժուարին գործ էր, առաւել դժուար էր հոգեւոր բնագաւառում։

Եթէ 1980ականներից առաջ առաւել կամ պակաս հետեւողականութեամբ խօսւում էր միայն 1937 թուականի բռնութիւնների մասին, որոնք աւելի շատ սեփական վէրքերի ախտորոշման մտադրութիւններ էին, ապա այլեւս անհնար էր անտեսել ժողովուրդների տեղահանումը, մտաւորականութեան գնդակահարութիւնը, հոգեւորականութեան հետապնդումները, գիւղացիութեան ողբալի կացութիւնը... Հասարակարգն ինքնասպանութիւն գործեց, անտեղի էր միլիոնաւոր մարդկանց, ճակատագրերի կործանումը։ Որքան էլ մեծ լինէին գործադրուած ջանքերն ու միջոցները, երեւոյթների զարգացման բնապատմական, գոյաբանական օրինաչափութիւնները ենթակայ չդարձան գաղափարական վարդապետութիւններին։ «Ամբողջ երկիրը դարձել էր ճնշուած հոգիների, զսպուած կարողութիւնների գերեզմանոց... Գերեզմանոց էր դարձել, մինչեւ որ պայթեց»[4], ասում էր Մաթէոսեանը։ Քանդուեցին հակայական հաստատութենական կառոյցները, ժողովուրդները փորձեցին փնտրել ու գտնել գոյակցութեան այլ ձեւ։ Չի բացառւում, որ ապագայում անհատական ձեռնարկատիրութիւնը (կապիտալիզմ) ինչ-որ կերպ կը զուգակցուի վերահսկողութեան ձեւերի ու մեթոդների հետ (սոցիալիզմ), եւ հնարաւորութիւն կը ստեղծուի գոյակցութեան առաւել արդիւնաւէտ ձեւերի, եւ մարդկութիւնը կը համատեղի իր անցած ճանապարհների առաւելութիւնները։

Բնական է, որ հասարակական կեանքի վայրիվերումները պէտք է արտացոլուէին գրականութեան մէջ. մեծապետական ինքնագովութեան, «մշտապէս եւ ամէնուր ճշմարիտ կեցուածք դրսեւորող երկրի» փառաբանման համընդհանուր մթնոլորտում ծնւում էր եւ ճշմարիտ խօսքը՝ մարդկային ինքնութեան ներթաքուն ծալքերը բացելն ու ազգային ճակատագրի իմաստաւորումը եղել ու մնում էր գրականութիւնը սնող հիմնական երակը։ Այս պարագայում արդէն այնքան էլ կարեւոր չէ, թէ տուեալ արուեստագէտը ինչ ժամանակ է արտացոլում իր ստեղծագործութեան մէջ։ Առաւել էական է, թէ ինչ ուժով, ինչ ընդգրկումով ու խորութեամբ է նա թափանցում ժողովրդի ոգուն, նրա էութեան մէջ՝ մշտապէս մնալով նրա պատմութեան, ճակատագրի տէրն ու պատասխանատուն։ Տարբեր ժամանակների համզգացողութիւնը գրողին դարձնում է իր իսկ ժողովրդի ոգու հայելին, որի օգնութեամբ մարդը հայում է ինչպէս աշխարհին, այնպէս էլ սեփական հոգուն։

Ամբողջ ԺԹ. դարի ու նաեւ Ի. դարասկզբի գրականութիւնը գիւղացիութեան ճակատագիրը, նրա խնդիրների լուծումը տեսնում էր երկրի մշակոյթի, տնտեսութեան զարգացման համատեքստում։

Յեղափոխութիւնից յետոյ ամբողջ խորհրդային գրականութիւնը գերազանցապէս ներկայացնում էր գիւղը դասակարգային պայքարի բովում։ 1920ականներին նկատելի երեւոյթ էին Շոլոխովի Դոնի Պատմուածքներ, Երկնագոյն Տափաստան ժողովածուները (1920)։ Դրանք ռուսաստանեան քաղաքացիական պատերազմի, գիւղում տեղի ունեցած սոցիալական տեղաշարժերի պատկերներ էին։

1920-1930ականների գրականութիւնը յաճախ է անդրադառնում այն հերոսներին, ովքեր եկել էին քաղաքից՝ գիւղում կոլտնտեսութիւն հիմնելու, մարդկանց կենցաղը շուտափոյթ բարելաւելու ցանկութեամբ (Կ. Լորդքիփանիձէ Կոյխիդայի Աշալոյսը, 1931-1951)։

1940ականներին խորհրդային գրականութեան մէջ ձեւաւորւում է նոր իրավիճակ։ Թէեւ յետագայում «անկոնֆլիկտայնութեան» տեսութիւնը հնարաւորութիւն չէր տալիս երեւոյթների էութեան մէջ խորանալու, այսուհանդերձ գրողներն առնչւում էին միանգամայն նոր երեւոյթի։ Յեղափոխական պայքարի բովից, պատերազմից յետոյ գրականութեան մէջ ներկայացւում էին այնպիսի դէպքեր ու իրադարձութիւններ, որոնք այլեւս «դասակարգային» չէին։ Սա որոշակիօրէն բարդացնում էր խնդիրը, քանի որ գրողները հարկադրուած էին յաղթահարել «առօրէական նիւթը»։ Իսկ սա ինչպէս հոգեբանական, այնպէս էլ կատարման առումով միանգամայն այլ կարգի խնդիր էր առաջադրում։ Ամէն պարագայում խօսքը մօտենում էր իրականութեանը, եւ անհրաժեշտ էր անկեղծութեան նոր աստիճան, որին ձգտում էր գրականութիւնը։ Եւ դա եղաւ 1950ականների հրապարակախօսութիւնն ու ակնարկը։ «Ձնհալից յետոյ» առաւել քան զգալի էր առանց «միջնորդաւորուած» խօսքի իրականութեանը հաղորդակցուելու հասարակական պահանջը։

1950-60ականներին խորհրդային գրականութեան մէջ շատ էին գիւղին, նրա տնտեսութեանը վերաբերող ակնարկները։ Բայց դրանց գերակշռող մասում կարելի էր գտնել տեղեկութիւններ այնպիսի նուաճումների մասին, որոնք շարժում էին մարդկանց զարմանքը, ապա նաեւ նախանձը. աննախադէպ ցուցանիշները տեղափոխւում էին ակնարկից ակնարկ։ Իրականում այդ ամէնը քօղարկում էր երեւոյթների կացութիւնը։ Հացահատիկի, մսի, կաթի ինքնարժէքը բարձրանում էր, տնտեսու-

թիւնների վիճակը վատթարանում, բայց մարդիկ չէին «նկատում» այդ ամէնը։

1961ին տպագրւում է Հրանտ Մաթէոսեանի «Ահնիձոր» ակնարկը, որ իր բացառիկ գեղարուեստական ընդհանրացումներով վերածւում էր խորհրդային երկրի տնտեսավարման սկզբունքների լուրջ քննադատութեան։ Ամբողջ Միութեան հրապարակախօսութեան ու ակնարկների համատարած գորշութեան մէջ «Ահնիձոր»ը առանձնանում էր հեռահար հարցադրումներով ու մարդկային ներաշխարհը թափանցելու համարձակութեամբ։

Միութենական մամուլի էջերում տպագրուած ակնարկներում առաջադրուած խնդիրները դառնում էին ասելիքի առանցքը՝ մարդն իր բնաւորութեամբ, հոգսերով, մնում էր անյաղթահարելի· ասելիքն իրականում չէր առնչւում իրականութեանը։

Մաթէոսեանի համար առաջադիրը մարդն է՝ քաղաքական երկիմաստութիւններից վեր, սեփական աշխարհի ինքնակայ արտայայտութեամբ, որը յանկարծակի յայտնուել է մի իրադրութեան մէջ, որտեղ պարտադրուող կարգ ու կանոնը հակադիր է երեւոյթների զարգացման բնական ընթացքին։

Այլեւս մէկընդմիշտ յայտնաբերուած է մաթէոսեանական աշխարհը· այդ ժամանակից ի վեր սկսւում էր մեր գրականութեան համար երեւոյթների իմաստաւորման մի նոր ժամանակ՝ մինչ այդ գոյութիւն չունեցող գիտակցութեան մի նոր տեսակ, աշխարհընկալման մի նոր կերպ։ Եթէ մինչ այդ մարդիկ աւելի «դրսում» էին, քան գրականութեան մէջ, ապա Մաթէոսեանն իր տաղանդի ուժով գրականութիւն բերեց իրական մարդկանց՝ իրական անուններով ու ժամանակների բերով։ Եւ քիչ է ասել, որ դա դժուարին խնդիր էր· խօսքը երբեք էլ իր սիրելի հերոսներին չէր վերաբերւում· պարզապէս միշտ էլ դժուարին է եղել ճշմարտութեան ճանապարհը։

Ակնարկի հրապարակումից յետոյ Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէն 1961 Յունիսի 30ին յատուկ որոշում ընդունեց Խորհրդային Գրականութիւն ամսագրում «թոյլ տրուած գաղափարական կոպիտ սխալների մասին»։

Գաղափարական սայթաքումների վերաբերեալ առանձին որոշումներ ընդունել էր եւ Խորհրդային Միութեան Կոմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէն՝ կապուած միութենական մամուլի աշխատանքներում տեղ գտած թերութիւնների հետ։ Վեհերոտ համարձակութեան դրսեւորումներն իսկ անմիջապէս ճնշւում էին· «Ոչ վաղ

անցեալում առանձին ակնարկագիրներ քիչ էր մնում ակնարկի հիմնական նշանակութիւնը մեր կեանքի բացասական կողմերի ցուցադրումը համարէին»[5]։ «Հիմնական պատճառն» *այն էր, որ հեղինակները մոռացել են* «գրողի գաղափարական կողմնորոշման մասին»[6]։ *Գաղափարական մեքենան անմիջապէս արձագանգում եւ միանգամից կանխում էր կասկածելի շեղումները։*

*Այս առումով թերեւս յատկանշական բացառութիւն կարելի է համարել Վալենտին Օվեչկինի «Գրողներ Եւ Ընթերցողներ» հրապարակումը*[7]։ *Սա առանձնանում էր ոչ այնքան ընդհանրացուածութեամբ եւ հրապարակախօսական պաթոսով, որքան որոշակիութեամբ. խորհրդային բիւրոկրատիան հասցէ ունէր. հեղինակը խօսում էր գործարանում ձեւաւորուած բիւրոկրատական յարաբերութիւնների եւ անտարբերութեան մասին։ Հարկ է վերջ տալ անտնտեսվարութեանը։ Չէ՞ որ* «Ազովի ծովը, ինչպէս նաեւ այն ամէնը, ինչ կայ մեր երկրում, պատկանում է ժողովրդին։ Դա մեր հասարակութեան բարիքն է»[8]։ *Երկու օր անց կենտրոնական կոմիտէն արձագանգեց։ Որոշում ընդունուեց՝ հեղինակի ոգեւորութիւնը զսպելու համար։ Ցանձնարարուում էր աւելի ճիշտ ձեւեր գտնել հարցադրումներ անելիս, թոյլ չտալ աւելորդ աղմկարարութիւն կամ աշխատողների նկատմամբ վիրաւորական արտայայտութիւններ, ինչպէս դա արել է ընկեր Օվեչկինը*[9]։

*Այս հրապարակումը որեւէ կերպ չէր շեղւում ընդհանուր գծից, բայց առանձնանում էր բացախօսութեամբ՝ այն որոշակի հասցէ ունէր։*

*Սա իրապէս կարեւոր խնդիր էր։ Ակնարկի ժանրի վերաբերեալ միութենական մամուլում 1950ականների վերջերին եւ 1960ականների կէսերին բանավէճ սկսուեց։ Խօսակցութիւնը թէեւ ժանրի բնոյթի մասին էր (գեղարուեստական թէ փաստագրական), բայց իրականում խնդիրը կապուած էր ճշմարտութիւնն ուղղակիօրէն ասելուն կամ չասելուն։ Մինչեւ վերջ չասուող խօսք կար։ Բացաչք իրականութեանը նայելու համարձակութիւնը դրսեւորուում էր «անվտանգ» ոլորտներում։ 1950ականների վերջերից սկսեց աճել «ուղիղ հասցէագրուած» արտասահմանեան ակնարկը, որտեղ արծարծուում էին սոցիալիստական, ինչպէս նաեւ զարգացող երկրների ձեռքբերումները (Օգոնեոկ, Ջա Ռուբեժոմ, Նովոյէ Վրեմիա)։*

*Նոյնիսկ 1970ականներին դիմանկարային ակնարկներ էին տպագրուում, որտեղ բացակայում էր ուղիղ հասցէն, իսկ եթէ, այնուամենայնիւ, ակնարկային հերոսը գոյութիւն ունէր, ապա որոշակի սոցիալական խմբի առաջաւոր ներկայացուցիչ էր։ Դրանք իրականութիւնից*

դուրս հրապարակումներ էին, որ կարող էին տպագրուել եւ տասնամեակներ առաջ, դրանք ոչինչ չէին կարող փոխել իրերի կացութեան մէջ[10]:

Բնական է, որ ընդունուած որոշումներից յետոյ տպագրուող հրապարակումներում բացասական երեւոյթները դուրս մղուեցին եւ մնաց միայն կարծեցեալ լաւը:

Ճշմարտութիւնը հարկադրում է ասել, որ միութենական մամուլում տպագրուած հրապարակումներն իրենց դրսեւորման ե՛ւ ձեւով, ե՛ւ բովանդակութեամբ քիչ է ասել, թէ գիջում էին «Ահնիձոր»ին: Ուստիւ պատահական չէր Համիութենական Կոմունիստական Բոլշեւիկեան Կուսակցութեան ընդունած բովանդակութեամբ թոյլ, բայց արտայայտման ձեւով յարձակողական որոշումը[11]: Քաղաքական կարճատեսութեան մէջ մեղադրւում էին ե՛ւ խմբագիրները, ե՛ւ գրախօսները[12], ովքեր համարձակուել էին գովեստի խօսքեր ասել գրողի մասին:

Ժամանակը ցոյց տուեց, որ ամենաբարձր ատեաններում իսկ ընդունուած մեծագոռոզ որոշումները գրոշի արժէք չունէին, եթէ դրանք նպատակադիր կերպով գաղափարախօսութեան վարկը փրկելու միտում ունէին եւ պարզապէս հեռու էին իրականութիւնից: Այսուհանդերձ կուսակցական որոշումը Մաթէոսեան-գրողի կենսագրութեան մէջ ուղղակի ճակատագրական նշանակութիւն ունեցաւ: Յետագայում նա խոստովանում էր, որ ինքը պարզապէս տէր կանգնեց ցաւին: Եթէ հակադարձ ռէակցիան այդքան կոպիտ եւ հետեւողական չլինէր, ամենայն հաւանականութեամբ Մաթէոսեանը նոյնքան հետեւողական չէր լինի գրականութեան իր «աշխարհագրական» տարածքը պաշտպանելու առումով[13]:

Ակնարկագիր Մաթէոսեանը տարբերւում էր հարցադրումների ելակէտում. խորհրդային երկրի ակնարկագիր-հրապարակախօսները 1960ականներին կրկնում էին այն, ինչ ասուել էր 30 տարի առաջ, երբ հայրենասիրութեան անուան տակ ճակատագրեր էին կործանւում. նրանց թւում էր, թէ բիւրոկրատական մեթոդների կատարելագործմամբ եւ մտրակի գործադրմամբ աւելի շուտ կարելի է հասնել երջանկութեան: Անտեսուեց մարդը՝ իր ամենատարրական իրաւունքներով ու հետաքրքրութիւններով, իսկ դա արագացրեց տնտեսութեան քայքայման ընթացքը: Մաթէոսեանը չէր առաջարկում բարձրացնել մթերքի գները՝ արտադրութիւնը խթանելու համար, ինչպէս դա արւում էր փակուղուց դուրս գալու միտումով: Նա երեւոյթները տեսնում էր ներսից եւ պահանջում էր առանց լրացուցիչ ներդրումների հնարաւորութիւն

*տալ գիւղացուն առաւել տանելի դարձնել իր կեանքը։* «Թոյլ տալ, որ սովխոզի անդամը տասական ոչխար ունենայ, եթէ կով պահելը չի արգելւում, ապա թոյլ տալ նաեւ խոտ ունենալ այդ կովի համար։ Խոտհարքների մի մեծ մասը չի հնձւում, շատը փտում է։ Թողէք հնձեն», «Տնամերձ հողերը վերցրել քչացնում էք։ Ախր շատն են քչացնում, դուք քիչը ո՞նց էք քչացնում, այդ ո՞ր կանոնագրութեան մէջ է գրուած, որ երկու-երեք ամիսը մէկ անգամ էք աշխատավարձ տալիս։ Չի գրուած, իսկ ստացածն էլ մի հագուստի գին է»[14]։

*Մաթէոսեանը չօշափում էր ընդհատումներով խփող տնտեսութեան գարկերակը։ Ակնյայտ էր, որ առանց մարդու առօրեայ պահանջների հաշուառման, պարզապէս անհնար է առաջընթացը։ Մասնաւոր սեփականատէրը ոչ թէ հանրային տնտեսութեան թշնամին է, այլ նեցուկը։* «Այդպէս՝ պետականօրէն մտածող մարդուդ համար էլ լաւ կը լինէր, մասնաւոր կովի մզզոցով դէս-դէն ընկնող բանուորի համար էլ» (31)։

*Ակնարկն իր գաղափարական ուղղուածութեամբ հակադրւում էր համայնավարական տնտեսավարման աղաղակող բացթողումներին։ Բայց եթէ ժամանակակիցներն առաջարկում էին յաղթահարել թերութիւնները, կատարելագործել աշխատանքի մեթոդները, կանոնակարգել բիւրոկրատական ապարատը, ուժեղացնել գաղափարական աշխատանքները եւն., եւ այդ ամէնը համայնական տնտեսավարումը կատարելագործելու նպատակով, ապա մաթէոսեանական ընկալումը հեռու էր յայտնի շրջագծում կոյրի նման ափլփելուց։ Անհրաժեշտ էր հնարաւորութիւն ստեղծել մասնաւոր տնտեսութիւնների զարգացման համար, հակառակ դէպքում հանրային տնտեսավարումը տխուր հետեւանքների կը յանգեցնէր։ Մաթէոսեանը երեւոյթները տեղափոխում էր այլ հարթութիւն։ Գրողն առաջարկում էր կառուցուածքային փոփոխութիւններ իրականացնել տնտեսավարման ոլորտում։ Համայնական սեփականութեան կողքին առկայ է եւ մասնաւորը, այն որոշում է գիւղացու գործնական, ամէնօրեայ հետաքրքրութիւնների շրջանակը։ Եթէ անտեսւում է արտադրութեան մէջ մասնաւոր ուղղութիւնը, ապա պարզապէս տնտեսութիւնից դուրս է բերւում նրա հոգին։ Սա իրրեւ ակնարկի ընդհանուր եզրայանգում, բայց ոչ բովանդակութիւնը սպառող գաղափար։*

*Հարկ է մաքառել ոչ թէ յանուն գաղափարի, այլ յանուն մարդու։ Կարեւորը երկրի բեռն ուսերին առած իրական մարդու կեցութեան խնդիրն է։ Եթէ տնտեսավարման մէջ խնդիրները լուծւում են յանուն որեւէ գաղափարի կամ սկզբունքների, նշանակում է գործել ընդդէմ*

մարդու։ Իսկ դրա հետեւանքներն աղէտալի էին ե՛ւ տնտեսութեան, ե՛ւ ներքին քաղաքականութեան, ե՛ւ ազգային յարաբերութիւնների, ե՛ւ գիտութեան բնագաւառներում։ Պարզւում է՝ յանուն երկրի, նրա վարած քաղաքականութեան վարկի կարելի է բազում անօրինութիւններ արդարացնել։ Եւ այդ ամէնը մարդու հաշուին՝ հնձուորի, հովիւի հաշուին։ Առաջին անգամ Մաթէոսեանը խօսեց ոչ թէ աշխատաւորի մասին կամ նրա անունից, այլ նրա բերանով։ Առաջին անգամ աշխատաւորի ներքին խոհը միախառնւում էր համայնական տնտեսավարման սկզբունքներին, որոնք իրենց կարծեցեալ առաջադիմական բնոյթով խորքում բրոնապետական սկզբունքներով խոչընդոտում էին երեւոյթների զարգացման ընթացքը։ Ոչ-արդիւնաւէտ տնտեսավարումը փորձում էին նուազեցնել ծիծաղելի ձեռնարկումներով («Ինչի՞ է պէտք ամէն հովուի ետեւից հինգ շուն՝ ամէնքը հարիւր ռուբլի ծախսով»[15])։

Մաթէոսեանն առաւել հեռուն է գնում, նա «շրջում» է երեւոյթների ընկալման տրամաբանութիւնը։ Ոչ թէ մարդն է երկրինը, այլ երկիրն է մարդունը։ Այս պարագայում արդէն ի յայտ է գալիս անհատն իր որոշակի պահանջներով, գաղափարներով։ Մինչդեռ այս ամէնը փակի տակ է, չկա՛յ։ Ուրիշները պիտի մտածեն, նրանք պիտի որոշեն քո ապրելու կերպը, քո իդէալը՝ յանուն որի պէտք է ապրել։

«Որեւէ ժուռնալիստի մտքով չի՞ անցել՝ զօտեխնիկի նախաձեռնութիւնը վերագրել նրան՝ աշխատանքի մարդ Զաւէնին եւ թխել, թէ ամէն կերպ նա ձգտում է իջեցնել մթերքների ինքնարժէքը։ Հնարաւոր էր, գիտէ՞ք։ Զաւէնը չէր բողոքի. կը մտածէր, որ խելօքը նրանք են, ինքը չէ, այդ նրա՛նք գիտեն, թէ ինչ է ուզում իր սիրտը» (39)։

Առաջին անգամ ակնարկ էր գրւում, որտեղ կարեւորւում էր յոգնութիւնից փակուող աչքերով, արեւի տակ այրուած ուսերով հնձուորի ցաւը, նրա ամէնօրեայ, գրեթէ տառապանքի հասնող մաքառումը։ Խորհրդային ակնարկագիրները սոցիալիզմի կառուցման ընթացքում աւելորդ էին համարել այս ամէնը, քանի որ կարեւորը «պրոբլեմն» է, կարեւորը հսկայական արտադրութիւն կազմակերպելն է, որն ընկալւում է որպէս «բոլորի համար անհրաժեշտ» ձեռնարկում. իրականում ստուերում էր մնացել մարդը՝ իր տարրական խնդիրներով։ Երկիրը կոյրի պէս խարխափում է իր համար բացարձակ ճշմարտութիւնների ոլորտում։ Վերեւում մտածում են, ներքեւում լուռ հնազանդւում են, վերեւում տնտեսավարման ձեւեր են առաջադրում, ներքեւում մտածելու բան էլ չկայ. «Սովխո՞զն է լաւ, թէ կոլխոզը»։ Մտածելու ժամանակ էլ չունեն։ Լսել են, որ ինչ-որ տեղ՝ Արարատեան դաշտում, նման ձեւն արդարաց-

նում է։ Բայց դէ, Արարատեան դաշտում մարդիկ համեմատաբար լաւ են ապրում արգաւանդ գիւղերի հաշուին։ Ոչ ոք ժամանակ չունի մտածելու, որ տարբեր բնակլիմայական պայմաններ ունեցող բնակավայրերին միատեսակ պայմանների առաջադրումը միանգամայն սխալ մօտեցում է։ Դրանք չեն կարող շտկել իրավիճակը, եթէ չասենք՝ կարող են վատացնել այն։

«Ահնիձոր»ը սովորական ակնարկ չէ եւ այն իմաստով, որ մաթէոսեանական ժամանակային ընկալումը երեւոյթները ներկայացնում է տեւական ընթացքի մէջ։ Սա խիստ կարեւոր հանգամանք է։ Հողը, երկիրը երբեք էլ չեն չափւում հնգամեակներով ու տասնամեակներով («Հողը Եւ Գիւղը»), խօսքը հարիւրամեակների մասին է։ Հետեւապէս անհեթեթ է նման կենսագրութիւն ունեցող երկիրը խցկել այնպիսի պայմանականութիւնների մէջ, որոնք ժամանակաւոր են ու որեւէ կերպ չեն բխում զարգացման ոգուց։ Ուստի, Մաթէոսեանի հայեացքը չի սահմանափակւում ներկայով, դա շատ պարզունակ կը լինէր։ Ներկան տեղակայւում է մեծ ժամանակի համատեքստում։ Սրանով է պայմանաւորուած հեղինակի զուսպ, բայց եւ հեգնանքով լեցուն խօսքը։ Բոլոր նրանք, ովքեր կը փորձեն կարգաւորել կեանքը սեփական ցանկութեամբ, կը մնան որպէս խաբուած տանտէրեր, դրանք երկրի համար կը դառնան բեռ եւ ոչ բեռնակիր, նրանք միայն իրենց ունակութեամբ կ՝օտարացնեն հողի աշխատաւորին երկրից, իսկ հողը կը սպասի իր տիրոջը այնքան, ինչքան որ պէտք է։

Աշխարհի խուլ անկիւնում, անտառի մէջ մի կտոր երկինք՝ դիմհարուած եօթ ծխի ու Հաղպատից բերուած մի շան հաչոց։ Խեղճ մարդիկ են՝ իրենց ունեցածը մի իշաբեռ։ Նրանք առասպելական հերոսներ չեն, ուստիւ իրենց կարողութեամբ ու բազկի ուժով հիմնում են մի Ահնիձոր՝ աշխարհի ծայրին։ Տարածքը դարերի կենսագրութիւն ունի, նոր տէրերը մեծ ու փոքր իշխանիկներից փախած մարդիկ են, որ բնութեան հետ դաշն են ու համերաշխ, բայց քաղաքակրթութեան գոյակցութեան ձեւերը շուտով ներթափանցում են եւ այստեղ՝ «գիւղ էք, հարկ տուէք»։ Իսկ հողը նոյն կենսագրութիւնն ունի, ինչ հազար անգամ մոխրացած, հազար ու մէկ անգամ կանաչած հայոց հողը, որ անշուշտ եղել է բերրի ու մարդաշատ։ Այստեղ ծփացել են արտերը, արարել են մարդիկ ու թաղուել ժամի ձորում։ Ժամանակ ու հնարաւորութիւն չի ունեցել մատենագիրը՝ դարերի համար կեանքի գովքն անելու։ Ձորերի վրայով անցել է մահը՝ ժանտախտի կամ Լենգ-Թեմուրի տեսքով, եւ ձորերում մնացել են միայն կեանքի հետքեր՝ խաչ, կարաս ու գերեզմանոց։

Նորերը վերակենդանացրին բնակատեղին։ Ժամանակի ընթացքում մարդկանց միջեւ եղած ներդաշնութիւնն ու համերաշխութիւնը խարխլուեց, կեցութիւնը նոր ձեւեր ընդունեց, եւ դա միանգամայն բնական էր. ամէն մարդ բնութիւնից ստացած որակներով տարբեր է միւսից, հետեւապէս եւ ժամանակի ընթացքում ամէն մէկի ունեցուածքը տարբեր չափեր ընդունեց. «Յետոյ, թէ ինչ է Մուկուչանց Արշակը պախրայի որս շատ է սիրել բան մաճ բռնելը, նրա տղերքը դարձել են Օհանէս պապի տղերանց հօտաղը։ Յետոյ, թէ ինչ է Քառանց տղերքը լաւ անասնապահ են եղել, նրանց ոչխարն ու կովը շատացել է...» (10)։

Նոր ժամանակներում Ահնիձորը «նոր սոցիալիզմի» համար կռուողներ տուեց, թէպէտեւ կռուողներ չտուեց հակառակ ծայրի համար։ Եւ դա բնական էր, այն, ինչ անբնական էր ու անընդունելի, հարկ է, որ բռնութեամբ արմատաւորուէր։ Հակառակ ծայրից կռուողները կեցութեան բնական ձեւերի կրողներն էին։ Նրանք աշխատում էին այնքան, որքան իրենց հմտութիւնն ու նաեւ ոյժն էր պատում։ Երկար քնողը ծաղրւում էր, աշխատողը հարստանում։ Դա «օհանէսմելիքեան կամ մելիքօհանէսեան» սոցիալիզմ էր, որտեղ մարդիկ վաստակում էին այնքան, որքան աշխատում էին՝ իրենց արածի կամ չարածի չափով։

Ժամանակն ընդունակ է փոխելու ամէն ինչ, կեցութեան բնական ձեւերը տեղի տուեցին, մարդիկ հարկադրուած սկսեցին ապրել միանգամայն նոր պայմաններում։ Այստեղ թւում է՝ շատ բան ինքնանպատակ է ու անիմաստ՝ անհեթեթութեան աստիճան։ Մաթէոսեանական հայեացքը փորձում է կեցութեան բնական ձեւերի տեսանկիւնով հայել երեւոյթներին։ Դրանք չգրուած օրէնքի ոյժ ունեն եւ հակասութեան մէջ են մտնում հասարակական կեանքը կարգաբերող ձեւերի հետ։

Սարուորը հնձուորին մածուն է բերում, հնձուորը սարուորին՝ կարտոֆիլ։ Նրանք հանրային սեփականութիւնը հարստացնող, պահպանող, գուրգուրող մարդիկ են։ Նրանք նոյն հարստութիւնն են ստեղծում, նոյն «սեփականատէրերն» են, նրանք այդ ամէնն ստեղծում են իրենց համար, հետեւաբար՝ արգելքը դառնում է անիմաստ։ Այսպէս է մտածում ահնիձորցին։ Բայց այդպէս չի «մտածում» երկիրը, որ կեցութեան բնական ձեւերը փորձում է վերաիմաստաւորել այլ կերպ՝ ի հեճուկս այն ամէնի, ինչ գոյութիւն է ունեցել դարեր շարունակ։ Երկրի ու մարդու հանդէպ յարգանքը, սէրը, դիմացինին օգնելու մղումը վերժամանակային բնոյթ ունեցող որակներ են։ Դրանք կորցնելը շատ անբնական կը լինէր։ Ու թէեւ սոցիալիզմը տնտեսավարման իր սկզբունքն է պարտադրել, եւ դրան չենթարկուելը պարզապէս անհնար է, բայց միեւ-

նոյն է՝ ահնիձորցին դժուարանում է տրամաբանութիւն գտնել տնտեսութեան կարգաւորման ջանքերի մէջ, ուստիեւ իր կարեցածի չափով «ուղղում» է անհեթեթութեան հետեւանքները. գիւղից շալակով (ձի՛ն է փրփուր կաթում) բթաչափ ու դառը կարտոֆիլը սար հասցնելն անխղճութիւն կը լինէր, հետեւապէս նորից ճանապարհին ցանում են կարտոֆիլ, եւ նորից պահակը Ադամ քեռին է։ «Եւ՝ անցած, նախանցած, հին տարիների պատմութիւնը» (11)։

Այսուհանդերձ, Մաթէոսեանին հետաքրքրում են աւելի հիմնարար խնդիրներ, դրանք արդէն գուտ տեղային բնոյթ չունեն. դրանք դառնում են հոգեբանական կարգի համընդհանուր հարցեր։ Սա միանգամայն բնական է այն իմաստով, որ գրողին հետաքրքրում է մարդը, երեւոյթների՝ անհատի վրայ ունեցած ազդեցութիւնը, այն հետեւանքները, որոնք հոգեկան տեղաշարժերի պատճառ են հանդիսանում։ Հետեւապէս ակնարկը մարդկային հոգիների պատմութիւն է եւ ոչ թէ իրադարձութիւնների կամ դէպքերի մասին արձանագրութիւն։ Գրողն իր հերոսների՝ անհատական վերապրումի շնորհիւ է ստեղծում տուեալ ժամանակաշրջանի պատկերը։

Մարդը բնութեան հետ ունեցած իր անմիջական կապով ամբողջացրել է բնութեան ներդաշնակութիւնն ու իմաստ է տուել այդ յաւերժական, ինքնակայ գոյութեանը։ Նա բնութեանն է, իսկ բնութիւնը՝ իրենը։ Դաշտը, սարերը, ձորերը իրենն են, ինքը բնութեան շարունակութիւնն է։ Բայց յանկարծ եկել է մի ժամանակ, որ «իրենց արջին» սպանելու իրաւունքն այլեւս իրենցը չէ։ Եւ որպէսզի, թէկուզեւ ձեւականօրէն, իր եւ ուրիշների համար Գիրիշը պահի տիրոջ զգացողութիւնը, հրացանն ուսած, չափում է սար ու ձոր, «իբր արգելուած որս եմ անում» ու՝ «ես դեռ սարերի տէրն եմ, ինչ ուզեմ, այն էլ կ՚անեմ»։

Բայց մարդու եւ բնութեան օտարումն առաւել «կազմակերպուած» ձեւեր է ստանում. նախ հարթեցւում, ապա գցւում է նոր ճանապարհ, բայց դա Ահնիձորն աշխարհի հետ կապելու համար չի արւում, այլ Ճրագթաթ ծմակը հեշտութեամբ տեղափոխելու։ Տեղադրուեց ճոպանուղի, եւ Մովսեսական Հայաստանը ուրախութեամբ ազդարարեց, որ Ահնիձորի տեղամասում արտադրողականութիւնն աւելացել է 65-75 տոկոսով։ Բնութիւնը դարձել է շահագործման լաւագոյն ու անփոխարինելի առարկայ։ Պետական քաղաքականութիւնն այս առումով շատ յստակ է. վերացւում են ամէն կարգի խոչընդոտ ու բարդութիւններ՝ սկսած ձեռնարկումը լայն թափով իրագործելու նպատակով։ Մի ժամանակ պահպանող եւ կտրող հիմնարկներն առանձին էին, հիմա կտրիր՝

որն ուզում ես։ «Թէ պլանի տեսակէտից է լաւ հիմա, ախպեր ջան, թէ աշխատավարձի...» ասում է հատող Պաւլէ Աբովեանը (19)։

Բայց ինչպէ՞ս է այս ամէնն ընդունում ահնիձորցին։ Քիչ է ասել՝ ոգեւորութեամբ։ Ով գիտէ՝ գուցէ սոճիների պուրակում առողջարան կառուցուի. չէ՞ որ բնութիւնը բարենպաստ է, մաքուր օդ ունի։ Մարդն աստիճանաբար կորցնում է ակնածանքը բնութեան նկատմամբ։ Եթէ քաղաքում մեքենայի կողմից տապալուած ակացիան շրջապատւում է մարդկանցով, նրանց գուրգուրանքով, ապա այստեղ շառաչելով բոպէն մէկ շուռ է գալիս մի հաճարենի. «Բեռնատարները կիսատ-պռատ ճանապարհներով երկաթուղային կայարան են իջեցնում Ճրագքաթ ծմակը» (18)։ Եթէ օրեր առաջ անտառն անձեռնմխելի գեղեցկութիւն էր, եւ այն ստեղծուել էր դարերի ջանքով, հիմա այդ ամէնը վերաձեւելն ամիսների հարց է։ Դէ եթէ կտրում են, ուրեմն վերեւում լաւ են մտածել, պէտք է, որ կտրում են։ Ահնիձորցին այլեւս չունի նախկին տիրոջ սրտացաւութիւնը, ինչ-որ տեղ նոյնիսկ լաւ է, իրենց փոխարէն մտածում են ուրիշները, ինչ կա՞յ որ։ Պարզւում է՝ ամէն ինչ կապակցուած է. համընդհանուր տնտեսավարումը համահարթեցնող, միասնական հոսքի մէջ է առնում տնտեսութեան ամենատարբեր ճիւղերը։ Ղեկավար մարմիններն աշխատանք կատարողից վերածւում են վերահսկող օրգանների, որոնք անմասն չեն յափշտակութիւնից։

Հումորի նրբին շեշտադրումներով է գրուած «Ճանապարհը, Պոստում» հատուածը։ Տեղամասի վարիչը, Ֆերմայի վարիչը, բրիգադիրն ու վարորդը իրար գաղտագողի, կիսախօսքով հասկացրին, որ անտառտնտեսութեան մեքենայ է բարձրացել ձորով՝ սովխոզի հանդից խոտ փախցնելու։ Գողութիւնն էլ ասես գողութիւն չի. անտառտնտեսութեան աշխատողները հնձել են սովխոզի խոտհարքը, վարչութիւնն էլ որոշել է սովխոզի դէգի մէջ հաւաքել այդ անօրինական խոտը, եւ այդ որոշումն իրականացնելու է։ Իրականում նպատակն այդ չէ, մեքենան նոր բացուած ճանապարհով կարելի է քշել մինչեւ Արտուշ պապի քողտիկը, իսկ այնտեղից մեքենան դատարկ ետ չգալու համար կարելի է փայտ բարձել։

Աստիճանաբար առաւել հետեւողական է դառնում վերեւից պարտադրուող քաղաքականութիւնը. «սովխոզացումը» տնտեսութիւնների խոշորացման ձեւով պարզապէս ճակատագրական եղաւ երկրի համար։ Եթէ կոլեկտիւ սեփականութեան դէպքում իւրացման սահմանափակ փորձերը զսպւում էին կոլեկտիւի անդամի կողմից, սովխոզների պա-

բագայում հաւաքական սեփականութիւնը դարձաւ հանրային, պետութեան սեփականութիւնը, չէ՞ որ մասնաւորը կապիտալիզմ է ծնում։

Մաթէոսեանն ակնարկը կառուցել է յստակ նպատակադրմամբ։ Բոլոր դէպքերն ու իրադարձութիւնները կատարւում են մարդու շուրջ, իսկ վերջինս հասարակական շահագրգռուածութիւնից զատ ունի եւ անձնական մղումներ։ Մասնաւոր սեփականութիւնը հանրային տնտեսութեան ոչ թէ թշնամին է, այլ նրա նեցուկը, եթէ սա չէր ընկալւում, ապա երեք ամիսը մէկ աշխատավարձ ստացող գիւղացին պիտի ձախողէր տնտեսութեան աշխատանքը։ Եղած աշխատավարձը չէր բաւարարում նրա տարրական պահանջները, բայց ապրել էր պէտք։ Մոռ հաւաքելու գնալը «դառնում» է դաշտային աշխատանքների ձախողում։ Նախագահին գրած զեկուցագրերը՝ անբարեխիղճ աշխատողների մասին, գրւում են այնքան ժամանակ, մինչեւ «բոլոր տատերն էին ունենում շաքար եւ կալոշ, բոլոր դպրոցականները՝ բրեզենտից[16] կօշիկ ու բամագիէ[17] շապիկ՝ Սեպտեմբերի մէկի համար»։

Այն ներքին հակասութիւնը, որ կար հանրային ու մասնաւոր տնտեսութիւնների միջեւ, Մաթէոսեանը ներկայացնում է ակնարկային իրադարձութիւնների ծաւալման ողջ ընթացքում, թէեւ բախումն ակնյայտ է երկու պարագայում։

Եուրիկ Աբովեանը որոնում եւ գտնում է տնտեսութեան ետընթացի պատճառները եւ կանգնում է «խեղճ մանր-մասնաւորի գլխին, այդ մասին (փաստերո՛վ, ռէալ) գրում է շրջանային թերթին։ Առաջընթացի դէպքում էլ Եուրիկը որոնում է, թէ ինչն է է՛լ աւելի արագ աճին խանգարողը եւ նորից կանգնում մանր-մասնաւորի խեղճ գլխին»։ Նա գիւղի մասին տարեգրութիւնն աւարտելու է հետեւեալ որոտընդոստ եզրայանգմամբ. «Կեցցէ Ազատարար Նոյեմբերի Քսանինը, որ աշխատաւորին տուեց հաց, լուսաւոր կեանք, Ճրագքաթին՝ գեղեցկութիւն» (20)։

Իհարկէ, «բաց նամակն» այս առումով ակնարկի բարձրակէտն է։ Այն ամբողջութեան մէջ բացայայտում է այն ներքին հակասութիւնները, որոնք առկայ էին տնտեսավարման ոլորտում։ Մաթէոսեանն առաջարկում էր առանց լրացուցիչ ներդրումների զարգացնել գիւղատնտեսութիւնը, թոյլ տալ մարդկանց, որ իրենք հոգան իրենց մասին։ Վերեւից պարտադրուած աշխատավարձը չի՞ բաւարարում՝ գիւղացին ինքը պէտք է հոգայ իր ամէնօրեայ պահանջները։ Թոյլատրել պահելու ձի, խոզ, ոչխար, եթէ կով պահելը թոյլատրւում է, ապա նաեւ խոտ՝ այդ կովի համար։ Եւ այս ամէնի արդիւնքում գուցէ կը հարստանա՞ր գիւղացին։ Իհարկէ ո՛չ։ Նա լաւագոյն դէպքում կը բարելաւէր իր տնտեսական

*վիճակը՝ հանրային հարստութիւնը պահպանելու եւ աւելացնելու համար։ Չէ՞ որ բանուորին չէր տրւում այնքան աշխատավարձ, որ գնէր ե՛ւ կարտոֆիլ, ե՛ւ կաղամբ, ե՛ւ իւղ, ե՛ւ միս, ե՛ւ հագուստ։* «Դուք երկուերեք ամիսը մէկ անգամ էք աշխատավարձ տալիս, տուածներդ էլ միայն հագուստի գին, եւ չէք թողնում, որ մարդիկ ունենան կարտոֆիլ, միս, իւղ, չէք թողնում, փաստօրէն, մարդիկ ուտեն» (32)։

*Սա իրապէս լուրջ մեղադրանք էր։ Սա իրականութեան մասին ճշմարտութիւնն ակնյայտ դարձնելու համարձակ քայլ էր։ Այն խնդիրը, որ իր առջեւ դրել էր երկիրը՝ ապահովել աշխատաւորի բարեկեցութիւնը, իրականում չէր լուծուել։ Պարզւում է, որ մարդն իր ազատութեան հետ կապուած (մասնաւորապէս տնտեսական) լուրջ խնդիրներ ունի։ Մարդը, որ իր ամէնօրեայ, չարքաշ, մէջքը ջարդող աշխատանքով է ստեղծում բարիք, հեռու է այդ ամէնից։ Բայց չէ՞ որ անբնական վիճակը մի օր կարգաւորուելու է։ Հետեւապէս անհրաժեշտ է նկատի առնել երեւոյթների զարգացման ընթացքը եւ անհրաժեշտ փոփոխութիւններ իրականացնել։ Մի ժամանակ մարդիկ դա ցանկացել եւ վերցրել են ուժով։* «Հիմա քիչ բան է մնում. այդ էլ պիտի տրուի»։ *Եւ ուզածն էլ մի մեծ բան չի. սովխոզի դիրեկտորն ունի կարմիր երես ու կլորիկ փոր։* «Ես ուզում եմ, որ բոլորն էլ դրանցից ունենան։ Այսինքն՝ սիուիտի[18] տարրերը իրականութեան մէջ» (32)։

*Աշխատանքի ծանրաբեռնուածութիւնն այնքան մեծ է, որ նման կերպ միայն շաբաթօրեակներով կարելի է աշխատել, եւ դա իր ազդեցութիւնն է թողնում մարդկանց հոգեբանութեան վրայ։ Նրանք պարզապէս չեն կարողանում գգալ գեղեցկութիւնը, մարդասիրութիւնը տեղի է տալիս չարութեան առջեւ։ Նման պայմաններում ապրողից դժուար է լաւ բան ակնկալելը։ Մանր աշխատանքը նրան դարձնում է դիւրագրգիռ ու մռայլ։*

*Խորհրդային երկրի ակնարկագիր-հրապարակախօսները տեւական ջանքեր գործադրեցին երկրի եւ նրա քաղաքացու մասին «պաշտօնական տեսակէտն» ամրողջացնելու համար։ Պատկերւում էր երջանիկ ժպիտը դէմքին, ֆիզիկապէս ուժեղ ու հպարտ կոլտնտեսականը, որ երկրի ապագան կերտելուց զատ ուրիշ այլ նպատակ չունէր։ Մաթէոսեանական խօսքն այդ համածաւալ միֆը քօղազերծող նշանակութիւն էր ստանում։ Իրականութեան մէջ գոյութիւն ունեցող անթաքոյց հակասութիւնները նա բերում էր գրականութիւն։*

Գրողը հերոսներին չէր կերտում իր նախասիրութեան համաձայն։ Նա պարզապէս վաւերացնում էր տառապանքով լեցուն իրականութիւնը։

Վալոդի սերունդը ծանր ճակատագրով է ապրել, տեսել է պատերազմը թիկունքում, մատուռ գնացող ծնկաստող տատին, հինգերորդ դասարանցի եղբօրը՝ շալակով կոլխոզի համար խոտ կրելիս, յետոյ եկել է շալակելու իր հերթը։ Պատերազմից յետոյ կերել է թեփահաց։ Իսկ հա՞յրը, գուցէ նա աւելի լա՞ւ է ապրել։ Հայրն ապրել է աշխարհում եղած դժուար տարիներից 55ը։ Բայց նա հօ մեղաւոր չէ՞, որ հինգ թուականին է ծնուել։ «Ապրելի՛ը լաւ ապրէր»։

Երկիրն ստեղծուել է բազում տառապանքների գնով, զրկանքներն ուղեկցել են սերունդներին, ստեղծուել է իւրօրինակ կախարդական մի շրջան, որից դուրս գալը պարզապէս դարձել է անհնարին մի բան։

Գրողը տարակերպ պատմութիւնների համադրմամբ ստեղծում է երկրի անտեսանելի, հակառակ երեսը։ Դա հզօր, ռազմական միջոցներով հարուստ պետութիւն է, որն ունակ է հսկելու իր անծայրածիր տարածութեան ամէն մի մետրը, հետեւապէս եւ կարողացել է վնասազերծել երկրի օդային տարածքը ներխուժած ռազմական մեքենան։ Ամբողջ երկիրն ապրում է ամերիկեան ռազմական հետախոյզ Պաուերսի մասին եղած հրապարակումների մեկնաբանութիւններով ու քննարկումներով։ Պարզ է, որ այդ ամէնի համար հսկայական միջոցներ են ծախսւում, եւ դա «բնական» է, քանի որ դա կատարւում է յանուն մարդու, իսկ աւելի յաճախ՝ «յանուն մարդկութեան»։ Իհարկէ սա բաւականաչափ հեղինակաւոր կեցուածք է՝ «հանուր մարդկութեանը ծառայելու» իմաստով, բայց իրականում շատ կասկածելի է նման մարդասիրական քաղաքականութիւնը, երբ խօսքը վերաբերում է չարքաշ աշխատանքով երկիրն ուսերին պահող աշխատաւորի տարրական իրաւունքներին՝ նրա առողջութեանը, աշխատանքային պայմաններին, կենսամակարդակի բարձրացմանը եւն.։

Նման քաղաքականութեամբ երկիրը գուցէ թէ լուծում էր համաշխարհային խնդիրներ, բայց չէր կարողանում լուծել շատ որոշակի հարցեր, որոնք կապւում էին մարդու կենցաղի, աշխատանքային պայմանների հետ։ Էլ չենք խօսում մարդկային էութեան, նրա ներաշխարհի ձեւաւորման մասին։ Մարդը բռնութեամբ խցկւում էր գաղափարախօսութեան ճահճի մէջ, նրան հարկադրում էին ասել, խօսել, մտածել այն, ինչ որ անհրաժեշտ էին համարում։ Մինչդեռ մարդը սրտի խորքում իր անկիւնն ունի՝ «մեզ չվերաբերող, նոյնիսկ իր կնոջը չվերաբերող, նոյ-

նիսկ իր մտքին չվերաբերող, սրտի՛ անկիւնը: Ինչո՞ւ ենք անպայման ուզում կարմիր անկիւն դարձնել այդ անկիւնը: Գոնէ դարձնէինք: Ախար ոչինչ էլ չենք դարձնում, աւերում թողնում ենք» (40):

*Առայժմ ամէն ինչ ենթակայ էր մնում վերեւից պարտադրուած գաղափարախօսութեանն ու տնտեսավարմանը, ինչի հետեւանքով միմեանցից խորթանում էին մարդն ու բնութիւնը: Սա հասկանալի էր ու ակնյայտ:*

*Ի վերջոյ իր նախնիների բնակատեղին է լքում Գիրիչ քեռին, որն իր արեամբ, բնազդով, կենսափորձով կապուած է իր բնօրրանին: Հետեւապէս այս աշխարհից պակասում է մարդը՝ իր կենսափորձով, յոյզերով, կենսագրութեամբ: Բայց մի՞թէ այդքան հեշտութեամբ հնարաւոր է բեկանել մարդու եւ հողի դաշինքը:*

*Մաթէոսեանական ակնարկի ենթիմաստը շատ աւելի կարեւոր է, քան այն քաղաքական մեղադրանքը, որ նա կարդում է տիրող վերնախաւի հասցէին: Ամէն ինչ անցողիկ է, ինչպէս ձորերի վրայով անցած ժանտախտը, Լենկ-Թեմուրի աշխարհաւեր արշաւանքը. հողին պահ տրուած սերմը մշտապէս սպասելու է իր տիրոջը: Բոլոր դժուարութիւնները ժամանակաւոր են այն նախաստեղծ դաշինքի համեմատութեամբ, որ կայ, եղել է հողի եւ նրա տիրոջ միջեւ:*

*Հասարակութեան ներդաշն գոյակցութիւնը պայմանաւորուած է ոչ թէ ընդունուած օրէնքներով, այլ բնութեան ու մարդու զարգացման բնական օրինաչափութիւնների համադրութեամբ: Բնութիւնը դուրս է մղում այն ամէնը, ինչ օտար է, պահում է այն, ինչ քննութիւն է բրոնում: Բնութեանը չես պարտադրի:* «Շուին դիմացել է. ընդունել է Աւետ Գաբրիէլեանի[19] մրցահրաւէրը եւ յաղթել. իր սարերն են եղել, իր անդորրը, մակաղած ոչխարը՝ հանգիստ մնչալիս. իր լուսինն է եղել, նստած բլրի գլխին, սարուորը պառկած է եղել, աչքը կպցնելիս, ու հանգիստ սուլել է շուին: Շուին յաղթել է» (41): *Շուին յաղթել է, քանի որ ճիշտ է վերարտադրել մարդկային հոգու ելեւէջները: Շուին յաղթել է՝ առանց պարտադրանքի: Հետեւապէս անխուսափելի է բնականի, հողի տիրոջ եւ նախաստեղծ դաշինքի յաղթանակը: Իսկ առայժմ մարդիկ անտրտունջ քաշում են իրենց բեռը, նրանք համոզուած են, որ անցողիկ են բոլոր դժուարութիւնները, մարդը չի կարող իր նմանի հանդէպ անտարբեր լինել, նա գտնելու է կեցութեան այնպիսի ձեւեր, որոնք տանելի կը դարձնեն այս կեանքը. չէ՞ որ ինչ-որ տեղ մարդիկ են աշխատում, ովքեր* «ունեն ե՛ւ լաւ սիրտ, ե՛ւ գիտութիւն»:

*Մաթէոսեանի «Ահնիձոր» ակնարկը տպագրուեց 1961ին, երբ խորհրդային երկրի գաղափարական հզօր մեքենան ընդունեց կոմունիզմ կառուցելու ծրագիր։ Ակնարկում բարձրացուած հարցերն այնքան հիմնաւոր էին ու համապարփակ, որ դրանք դարձան ոչ միայն երկրի տնտեսավարման քաղաքականութեան հետեւողական քննադատութիւն, այլեւ նախանշեցին գրողի անցնելիք ճանապարհը։ Մաթէոսեանը գտել էր իր աշխարհը· դրա իմաստաւորումն էլ դառնալու էր նրա ստեղծուող գրականութեան առանցքը։*

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Arnold Toynbi, *Tsivilzatsiya Pered Sudom Istorii* (*Քաղաքակրթութիւնը պատմութեան դատաստանի առջեւ*), *Մոսկուա*, 2003, *էջ* 441։

[2] *Voprosi Literaturi*, *Մոսկուա*, 1990, *թ*. 6, *էջ* 91։

[3] *Հրանտ Մաթէոսեան, Ես Ես եմ, Երեւան, Ոսկան Երեանցի*, 2005, *էջ* 462։

[4] *Ցովիկ Վարդումեան, Զրոյցներ Հրանտ Մաթէոսեանի հետ, Երեւան*, 2003, *էջ* 16։

[5] V. Poltoratskii, "Ocherk Ili Reportazh" (*Ակնարկ եւ հաղորդագրութիւն*), *Literatura I Jizn*, 1958, 14.11.1958։

[6] "Ideynaya Pozitsiya Pisatelya" (*Գրողի գաղափարական դիրքորոշումը*), *Literaturnaya Gazeta*, 21.11.1959։

[7] *Literaturnaya Gazeta*, 2.10.1956։

[8] *Նոյն*։

[9] *Sovetskaya Pechat' V Dokumentakh* (*Խորհրդային մամուլը փաստաթղթերում*), *Մոսկուա*, 1961, *էջ* 287։

[10] G. Miloslavova, "Pyatnadtsat' Let I Vsya Jizn" (*Տասնհինգ տարի եւ ողջ կեանքը*), *Komunist*, 26.11.1972, *նաեւ՝* O. Nosov, "Brigadir" (*Բրիգադիրը*), *Vecherni Lenigrad*, 13.12.1979։

[11] *Տե՛ս՝ Վազգէն Մնացականեան, «Ահնիձորի Պատմութիւնից», Գրական Թերթ* 25.08.1989, *նոյնի՝ «Ահնիձորի Պատմութիւնից եւ Մի Քանի Հարցադրում Հրանտ Մաթէոսեանին», Երկիր Նախիրի*, 1994, *թ*. 21, *էջ* 8-9։

[12] *Ակնարկի վերաբերեալ առաջին գրախօսականը գրել են Լեւոն Հախվերդեանը եւ Սուրէն Աղաբաբեանը՝ «Թարմաշունչ խօսք», Գրական Թերթ*, 21.05.1961։

[13] *Մաթէոսեան, Ես Ես եմ, էջ* 501։

[14] *Հրանտ Մաթէոսեան, Երկեր, հատոր առաջին, Երեւան*, 1985, *էջ* 32։ *Ցեռագայ էջերը նշւում են շարադրանքի մէջ*։

[15] *Մաթէոսեան, Երկեր, էջ* 38։

[16] *Բրեզենտ (ռուս.) - կոշտ, անջրանցիկ կտոր*։

[17] *Բամազիէ (ռուս.) - բամբակեայ կտոր*։

[18] Suite (*Ֆրանս.*) - *երաժշտական ստեղծագործութիւն*։

[19] *Աւետ Գաբրիէլեան* (1899-1983), *ջութակահար*։

# THE IDEOLOGICAL CONNOTATIONS OF HRAND MATEVOSIAN'S "AHNIDZOR" ESSAY
(summary)

VACHAGAN GRIGORIAN

Among the many essays of Hrand Matevosian,including"Ahnidzor", the latter is singled out because it signifies his entry into Armenian literature. With its daring questions and depth "Ahnidzor" may be considered the peak of the the author's first stage of literary work.

The essay is unique, and its generic feautures are second to none in the Soviet essays of the 1960s. Besides it had an important effect on the writer. Matevossian felt that it was important to take charge of pain, to write on the land laborer, and the village, where he believed the fate of the state was to be decided.